

ԱՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
սառնակի	6 "
վեցամսեայ	6 "
Արսասահմանի համար սարնիկան	15 "
վեցամսեայ	8 "
Ամերիկայի համար սարնիկան	3 ֆր.
վեցամսեայ	1.50 "

Ծանուցանելու համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սակարկի է. երեքին տեղի ակադեմիայի համար 20 0/0 զեղչ կը ընդունուի:

Վառակայի համար ձեռքի 10 սակարկի

ՇԱՐՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՐԻՆ. ԲԱՆՈՒՄԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ՝ ՕՐԵՐԸ

Եւսկի իր գրական գրկի խմբագրութեան հասցիին

Редакция на вѣстникѣ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Char-oum" (Bulgarie) Yarna

Պուշկարիոյ համար ձեռքի 15 ՍՍԼԹԻՄ

Արսասահմանի համար ձեռքի 20 ՍՍԼԹԻՄ

Գրութիւնի հս չեմ սրտի

ՇԱՐՈՒՄ Ի ԲԱՏԱՆՈՐԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՏԱՆԿԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ԿՈՎԿԱՍԸ ԿԵՐԱՐԱՆԱՓՈՒՎԱԾ

Մեր աշխատակից Յալազի յօդուածները, ինչպէս և ուրիշ թերթերում գրածները յստակօրէն ցոյց են տալիս որ կովկասի հայութիւնը բոլորովին փոխված է և հակայական քայլեր է ածում դէպի իր իրաւունքները պաշտպանելու գիտակցութիւնը:

Կովկասի հայը այսօր գործնականապէս և աշխարհ կերպով ներկայանում է ամենամեծ ընդդիմադիր ուժը որս կառավարութեան պէտքով կասում, հարկը ըստիպած միջոցին ուժով պաշտպանում իր իրաւունքները: Մեծ յառաջդիմութիւն, այս արիւնքի չորսուր ազդակը եղաւ եկեղեցական կառուցման գրաստանը:

Ուրախութիւն պատճառով կերպարանափոխում է այս, և աւելի ուրախակի պէտք է լինէր, եթէ տեղի չունենար Բարուի խայտառակ կոտորածը, որը ոչ միայն բարեկեցիկներին, այլ ամբողջ կովկասի հայութեան ներկայ ընդվզումի թափը արատաւորեց:

Այս բարեկեցիկների ոչխարային կոտորումը մեծ անպատուութիւն է կովկասի հայութեան համար, և ժիւղագամայն ապացուցում է թէ ոսկիինքով բռնաբարված, ճարպոտ, փարթամութեան ու շաւարութեան մէջ մխրձված հայը ամեն տեղ կը կոտորվի ոչխարի պէս, ամեն տեղ նոյն վախկոտ, ստոր առնական և ցեղային արժանապատուութիւնից զուրկ հայն է: Լինիլի գա կովկասում, լինիլի ծանկատանում:

Այժմ կարմնաշիբան շը կոյ որ Բաքուի ճարպոտ բուրձուան, բացի մի քանի բացառութիւններէ, իր և մերձաւորի կեանքը փրկելու համար, ոչ թէ զէնք, քոր և փայտ է վերցրել ու գործով զգոյն պարսիկ ամբոխին զիմադրելով կեանք փրկելու այլ զանազան վայելուչ ու անվայելուչ ծակ ու ծակերում է թագնով: Զէնքով և զիմադրելով անձնական և մերձաւորի կեանք պաշտպանելու համար պէտք է ունենալ անաւանակ սիրտ և կեանքի բարոյական նպատակ: Իսկ այդ ունենալը, կամ նրա ստիճանը, որը մեր օրերի համար անհասանելի է, որ փողով մարդիկ փրկելու ունենան, կամ նրա ստիճանը, որը մեր օրերի համար անհասանելի է, որ փողով մարդիկ փրկելու ունենան:

պանելու համար պէտք է ունենալ անաւանակ սիրտ և կեանքի բարոյական նպատակ: Իսկ այդպիսի յատկութիւններ որոնելու ունենալը, կամ նրա ստիճանը, որը մեր օրերի համար անհասանելի է, որ փողով մարդիկ փրկելու ունենան:

Գոնէ այսուհետեւ յոտանք որ բարեկեցիկ համոզվեց թէ կեանքի մէջ բազմաթիւ կան, որ փողով չէ կարող մարդիկ փրկել, որ փողով մարդը ոչ միայն մեծ չէ կարողանում հանդիսանալ, այլ շատ պատիկ է մուկից էլ պատիկ մի արարած, ու խայտառակութեան նման թէ ամբողջ մարդկութեան, և թէ իր ցեղի համար:

ՎԱՐՊՈ

ՄԱՐԿԱԿԱՆ ՇԱՐՈՒՄ ԵՐԸ

«Յրանքիր. Յայթ.» թերթի մէջ Ալի Նուրի պէս անունով մէկը յօդուած մը գրած է Արարիոյ ներկայ շարժումներու մասին, որմէ թուրք կառավարութիւնը շատ կը շեղուի: Նուրի պէս իր յօդուածը կը սկսի հետեւեալ կերպով: «Շարժումը որ տարբերակ կը պատրաստուէր Արարիոյ մէջ և որն այժմ յանգած է կառավարչական ընդհարումներու արարական ընկալութեան և թուրք կառավարութեան միջև: Երբ ընդարձակ ծաւալ կանէ: Պոլսոյ մէջ կը շարունակեն Արարիոյ խռովութիւնները ներկայացնել իր ըմբոստութիւն մը քանի մը արաբ ցեղերու: Միջոցաւ իրողութիւնը այն է որ այդ կոխը բոցավառուած է արաբներու կողմէ խալիֆայութիւնը ձեռք ձգելու համար և իր այդ ձեռքը շատ ու շատ քարք է սովորական ապստամբութիւններէ: Շարժման գլուխ կանգնած է Սարտամուրտի կառավարիչը: Ենթա Համիդի, որ ուղղակի մարգարէին շատախոյններէն է: Սուլթան Ապտուլ Համիտին խալիֆայութիւնը խլելուն ձգտումներուն մէջ Համիդիին կը յենի արաբական ցեղերու մեծ մասին վրայ, ու յիմանալով անպատեհութեամբ: Ինչպէս յայտնի է գործիքի վեր թուրքիոյ սուլթանները կըրցեր են Մահմետի ուղղակի շատախոյնութիւնը գրաւելու և անոր ներկայացուցիչը հանդիսանալ աշխարհիս վրայ: Այդ մտքով անոնք կըրնական վարչներ են աշխարհիս բոլոր մահմադականներու, որոնք թիւը

հարիւր միլիոններու կը հասնի: Եւ անա հիմակ արաբ Համիդիին, մարգարէին անմիջական ժառանգը, ելած է թուրք սուլթաններէն խլելու խալիֆայութիւնը:

Ներկայ շարժման կեդրոնն է Սարտամուրտի բարձրակարգը, հարաւային Արարիոյ մէջ: Տեղական բնակչութեան մեծամասնութիւնը կը պատկանի կորիչական հուշակառու ցեղին, որ երբեմն կը տրէր Արարիոյ և որմէ յառաջացած է Մահմետի ցեղը: Պատմականօրէն Համիդիին ցեղը կորիչներէն է, աւելի անմիջական կը համարուի, քան թէ Մեքկէի ներկայ շարժումներուն, որոնք նոյնպէս մարգարէն կը սիրին: Սարտամուրտն շարժումը կը տարածուէր զէպի հիւսիս արեւմտեան Արարիոյ: Տեղերը մէկ մէկու ետեւէ կսկսէին շէյխ Համիդիինը ճանաչել իսկական խալիֆ և պիտի շարունակուէր մինչեւ ապստամբութեան պայթիլը:

Այդ ամէնը կատարուեցաւ լուռ և մուռ: 1903ին պատրաստութիւնները այնքան յառաջացած էին, որ շէյխը ինքզինքը բաւական ուժեղ զգաց թափանցելու հիւսիսային կողմը, եւ մէկ է և թուրք պաշակառոյցը գտնուած տեղին խուսափելով ան իրարու ետեւէ գրաւեց զանազան դաւառներ: Անոր և Սուլթանի զօրքերու միջև ընդհարում տեղի ունեցաւ հազիւ 1903ի վերջին, երբ Համիդիինը գրաւեց եւ մէկի շիրսիային գաւառական Ասիր քաղաքը: Այդ ճակատարտի մէջ թուրքերը կատարեալ հաղթութիւն կրեցին: Թուրք հազար պարսիկներուն մեծ մասը սպանուեցաւ, ի թիւս որոնք և քաղաքին զօրաց հրամանատարը և կառավարիչը:

Սուլթանի պարտուած զօրքերուն մնացորդը անցաւ Համիդիինի կողմը: Այդ օրէն սկսեալ վերջինս օրուսի կը զօրեղանայ և համակողմներուն թիւը կը շատնայ, միեւնոյն ժամանակ այդ զէպը կը սուղնէ որ անոր յաղթութիւնը չի փաստեր իր մեծ ուժը այդ կողմին մէջ որ սկսուած էր խուզարկութիւններու նպատակով: Անոր զինուորական ուժի միջոցով կը գրտունուի եւ նահանգին հարաւային գաւառներու մէջ: Այնչէն նահանգի մէջ ալ Համիդիինը ընդհարումներ ունեցած է Արգիլիայուց հետ:

Սահայն ընդհանրապէս Անգլիացիները Ատմի մէջ թշնամարաբ չեն վերաբերուիլ զէպի ապստամբները: Գոնի մը գործերը զմեզ կատարեն կարծել որ Անգլիա գաղտնի հաճութով կը հետեւի այդ շարժումներուն:

Փաստ է որ վերջին երկու տարուան ընթացքին մէջ ամբողջ հարաւ

արեւմտեան Արարիոյ, բացի Ատմի քով գտնուած Անգլիական կառուածներէն ինկաւ Համիդիինի ձեռքը: Ան իրեն գրաւած է բոլոր տեղական ցեղերը, և ուր որ դիմադրութեան կը հանդիպի, առ ալ տեղի կուսնայ թուրքերու ճնշման տակ: Ծառ տեղեր բնակչութիւնը Համիդիինը կը շնորհաւորէ իրեն ազատարար և իսկական խալիֆի:

Այդպէս կամայ կամայ շէյխը սիրապետեց եւ մէկի ամբողջ նահանգը: Ասիրի ճակատամարտին մինչեւ մտտօրբս Համիդիինի և թուրք զօրքերու միջև ընդհարում տեղի ունեցած չէր: Եւ մէկի նահանգին մէջ կը գտնուի թուրքական ուժեղ զօրքանակ մը և վերջին տարիներս այդ զօրքերուն թիւը շարունակ կը շատնայ, որպէս զի կարելի ըլլայ շէյխին արշաւանքին առաջն առնել: Առ թիւեր անցած տարուան վերջը որոշեց բազմաթիւ զօրք զրկել Արարիոյ: Փետրուարի մէջ տեղի ունեցաւ լուրջ ճակատամարտ մը արաբներու և թուրքերու միջև որը տեւեց 48 ժամ:

Ճակատամարտը տեղի ունեցաւ Մենակա կոչուած տեղը որ կը գրաւուի Սանա եւ Սուլթանի զօրքերը գրաւեցին Մենական: Թուրքական պաշտոնական հաղորդագրութիւններու մէջ Մենական կը կոչուէր արաբներու յենարանը: Այդպէս կըստէր դիմադրող արաբներ իր կարծուէր թէ այդ կարծեցեալ յենարանը առնուելովը արաբական ուժերուն միջուկը խորտակուած է: Իրողութիւնը խորովին այդպէս չէ: Համիդիինի զօրքերուն մէկ մասը դեռ եւս կը գտնուի Մենակայի հիւսիսային կողմը: Իսկ մեծ մասը դեռ եւս տեղափոխուած է հարաւային Արարիոյ մէջ: Որ Պոլսոյ մէջ Մենակայի առումը անկեղծօրէն չէր ընդունուի իր բնականապէս կարծական շարժման խեղդում, անկէ կը հասկցուի որ Սուլթանը այդ ճակատամարտէն անմիջապէս ետքը կրկին բաւական զօրք զրկեց եւ մէկ:

Մինչեւ շէյխ Համիդիինը անգործութեան չէ դատապարտուած, ի պատասխան Մենակայի զէպին, ան որոշեց փոխել իր թագնէր եւ յարձակողական եռանդուն դիրք բռնել: Ան արդէն գրաւած է երկու կարիւր քաղաք, թայժ եւ Քատարա, որոնք կը գտնուին Ատմի եւ Մեքքա տանող կարաւանի ճամբուն վրայ: Այսպէսով շէյխը դարձաւ ուժեղ հարաւային եւ մէկի տէրը: Եւ նոյն տան գրաւած է հարաւային Մենակա տանող կարաւանի ճամբան: Բայց

չէյիւր ատով ալ չը պիտի գոհանայ . վերոյիշեալ երկու քաղաքները գրաւելէն վերջը ան պաշարից Սանա քաղաքը եւ այնպիսի յաջողութեամբ մը որ չուտով քաղաքին կառավարիչը բանակցութեան մտաւ իր 5000 զինուորներով անձնատուր ըլլալու համար : Զանազան գիտութեանով շէյ-իւր մերժեց պաշարուածներու առաջարկութիւնը . Սանան ինչպիսի պէս շէյ-իւր պիտի տէր գառնայ եւ մէջին նահանգի մեծ մասին . որը նախորդ դարու 70 թուականներէն սկսեալ ինկած է սուլթանի իշխանութեան տակ :

Ինչ որ ալ ըլլայ սուլթան Համիտին դիրքը Արաբիոյ մէջ խախտուած է : Իր զօրքերուն յաջողութիւնը ապահովելու համար , ան պարտաւոր է դեռ գոնէ երկու զօրաբանակ զբրէն Արաբիա . արդեօք այդ նոր զօրքերն ալ ժամանակին տեղը պիտի հասնին . այդ ալ խնդիր է :

Առ այժմ շէյիւր Համիտի տիրակալութիւնը համեմատաբար շատ բարեկարգ է . ան բաւական արամադրելի ժամանակ ունի իր գրաւած տեղերու մէջ ամրանալու եւ կազմակերպելու համար :

Արաբները այս կռիւն մէջ այն առաւելութիւնները ունին , որ երկիրը իրենցն է . սեղական պայմաններուն լաւ ճանօթ են եւ կլիմայական թերութիւններէն չեն տառապիր . ատոր հետ միասին անոնք գիւմար ըլլալու համար ծնուած են : Արաբները կը շահին եւ անոր համար որ իրենց զէժ կուող թուրք սպաները իրենց կացութիւնէն զգոհ տարրեր են :

Եթէ սուլթանը պարտուի արաբներու հետ մղած կռիւն մէջ . ան պիտի կորսնցնէ խալիֆայութիւնը . Մեկկա կրնայ շէյիւրն ձեռքը եւ այդպիսով սուլթանի հոգեւոր իշխանութիւնը բոլոր միւսլիմաններուն վրայ պիտի ոչնչանայ :

ՅՈՅՆԵՐՈՒ ԳՍԶԱՆԱՅԻՆ
ՍՆՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Կամաց կամաց Սոկրատէսի , Սօփոկլէսի ու Պիթիկլէսի ժառանգ հըրու

Ա. ԱՍՏԻՏԵԱՏՐՈՎ
— 3 —
ՎԻԿՏՐԻԱ ՊԵՎԼՈՎ Ա
— 0 —
(Տօնախմբութիւն)
— 0 —
(Գրագիտի յիշողութիւններ) ից . Ամրան սրկածներ բաւական տարտիմակ հաստատութիւն միջ)
— 0 —
(Թարգմ. ուսերէնից) 22
2.
(Շար. նախորդ թիւին)

—Երեկ ես տեսայ Դաշինկայի շարունակեց Բուրուներ : Համա ճաշակ ես ունեցել Աֆանասիչ . նա պատակի շրթունք ունի :
Հէ , հէ , հէ , այդ կոչվում է երեք համարը , առարկեց Աֆանասիչ :
—Եւ չիլ է . մէկ սքըր սարին մի-

չակուած յոյները իրենց գազանային բնազդներու մէջ թուրքերէն ու մօնկօյներէն ալ պիտի անցնին ,

«Շարժումն ինքնից յոյներուն յայտնի է որ անցեալ տարուան վերջերը յոյներն ալ սկսան հրոսախմբեր կազմել եւ զրկել Մակեդոնիա , որոնց նըպատակը պիտի ըլլար գիւմարի Պուլկար հրոսախմբերուն թուրք կառավարութիւնը յունական այդ հնարամտութեան ոտքով ձեռքով փարեցաւ եւ անոնց ազատութիւն տուաւ ու զաննին ընել , որովհետեւ ատով թուրքերոյ Մակեդոնիոյ մէջ ամենաւտանգաւոր թնամի պուլկար ասարն էր որ պիտի թուլնար :

Յոյն հրոսախմբերը լայնօրէն օգտուեցան Սուլթանի կառավարութեան ձեռնպահ միջոցն . ու պուլկար հրոսախմբերը մէկդի թողով իրենց գազանութիւնները կատարել սկսան պուլկար խաղաղ բնակչութեան վրայ : Այդ գազանութիւններէն ամենասարսփելին այս օրեր գործադրուեցաւ Զալօրիչան գիւղին մէջ : Գիւղէն ողջ ճողպարածներ փախելով Սօֆիա հետեւեալը կը պատմեն .

— Կոտորածն երկու օր առաջ գիւղը թուրքեր եկան եւ յայտարարեցին որ չուտով թուրք զօրք պիտի գայ գիւղը եւ երբոր փողի ձայնը լսուի բոլոր գիւղացիները թող տնիքէն դուրս ելլան զօրքը գիւմարելու համար :

Իրօք , ամայս 25ին , առաւօտեան ժամը 5ին գիւղ եկաւ զինուած յոյն խումբ մը , եւ փողերը հնչեցուց :

Գիւղացիներէն շատերը դուրս ելան իրր թէ զօրքը դիմաւորելու բայց յոյներէն բռնուելով կոտորուեցան :

Անկէ վերջը յոյն բալիքարիները մտան գիւղին մէջ եւ սկսաւ ընդհանուր կոտորածը , որ տեւեց 40 ժամ :

Ամբողջ ընտանիքներ քնուեցան , տուները թաւնելէն վերջը այրուեցան . մայրերը իրենց երեխաները փրկելու համար կառաջարկէին իրենց թանկագին իրերը , բայց բալիքարիները իրերը առնելէն վերջը կրկին մայրերուն առջեւ անմեղ երեխաները կըսպաննէին . լսողներ կան որ յոյները կըսեն եղբւր զկոտորեցէք , մեզ կը վճարեն որպէս զի պուլկարները կոտորենք :

Կոտորածն երկու օր վերջը չորս

ւսը ձորին :
—Ա. ելի լաւ . համարուվելիս , բոլոր կողմերը տեսնում ենք , արդեօք մէկը չէ՞ գալիս :
—Այ դու տազ սատանա :
—Այո տազ եմ , եւ ծեր , գրա համար էլ Դաշինկայի ետեւից եմ ընկնում : Երբ ես էլ ձեզ նման խոպուպիկներս թափահարել կարողանայի գեղեցիկ արձուի պէս . Դաշինկայի վերա թքել էլ չէի ուզի . որովհետեւ խոպուպիկները թափահարելով եւ բազէի աչքերը փայլեցնելով , իսկոյն բոլոր գեղեցկութեան թագուհիները իրենց պալատներում ձեկաչօք են լինում ձեր առջեւ : Բայց քանի որ տազ սատանա եմ , գրա համար էլ պէտք է խնայելիմ նապաստակի շրթունքի առջեւ :
Սոպոպիկաւոր Բուրուների գեղեցկութեան թագուհի Վիկտորիայի մօտ ունեցած անյաջողութիւնների մասին , այս միամիտ , թերեւս եւ հաշուով ակնարկութիւնները ձերուկի կողմից շատ թուլնալի ձեւ էին ստանում եւ զարմանալի չէ որ Բուրուներ

հիւպատոսներ եկան եւ երբ տան մի մէջ տեսան մայր եւ հայր իրենց երեք զաւակներովը միասին գրկախառն սպաննուած , չափազանց յուզուեցան , հիւպատոսներէն մին ուշաթափ եղաւ իսկ միւս երեքը լացին . . .

Կոտորածի ատեն թուրքին զօրքը գիւղին քով գտնուած բարձրութեան մը վրայ կը գտնուէր եւ լուր հանդիսատես կը մնար կոտորածին եւ օգնութեան չի հասաւ .

Տեսարանը չափազանց յուզիչ էր . սպաննուածներու դիակները երկու օր անթաղ մնացին . դժբաղդ մայրերու դիակները չէին գտնուէր զաւակներու դիակներէն , կիները ամուսիններէն , եղբայրը եղբորմէն . քանի վը կիներ վաշէն եւ յուսահատութենէն խենթեցան . . . 35ի չափ տուներ այրուած են :

ԱՆՔԻՆԵՐ ԵՒ ՅՈՒՋՈՒՄՆԵՐ

Չենք կրնար չի յիշել եւ անտես առնել ընդվելի այն վիճակը , որուն մէջ ապրեցանք եւ կապրին գեա մեր հարազատները , աշխարհի էն ապրելանիկ եւ էն անբարոյական կառավարութեանը տակ :

Արդարեւ մենք հայերս Փոքր Ասիոյ էն ընդունակ ազգն ենք՝ հակառակ մեզ շրջապատող անբարոյական եւ բիրտ հալածանքին որ կը տիրէ 5—6 Կարբէի վեր , բայց քիչ մը հրէանման ենք . Մէկ բանով միայն կը տարբերինք . մնալով մեր հայրենի հողին վրայ , բայց քաջալերելով մեր շուրջը գտնուող եւ մեզ հալածող վայրենի , գոռհիկ , անբան , աշխարհաւեր թուրքն եւ քիւրտը եւ յարակից մոլեռանդ տարրը որոնք անխնայ ծծեցին մեր հոգեկան եւ առնային հիւթը վերածելով մեզ ենթակայ՝ հիւծող անասնային անզգայ հօտի :

Ազգային գոյութեան էն մեծ

փոխանակ Աֆանասիչի հետ զարճանալով միթարվելու աւելի վատ տըրամազրութեան մէջ էր ընկնում :

—Է՛ , աղալը սկսեցիք , խոտորվելով ասում էր Բուրուներ . կորսվիր թո ընկնաւորութիւններովը միասին . զէ գնանք անտառ , վերցրու նկարչական պարագաներս , վերցրու եւ թո յիմարական թակարթները թոչուն որսալու համար :

Ու ամբողջ օրով անհետանում էին . թոչուններ եւ նկարներ քիչ էին բերում . բայց ուշ էին վերադառնում եւ յաճախ երկուսն էլ արթած :

Այդ երկուսի բարեկամութիւնը չը գիտեմ ինչու . Վիկտորիային շատ էլ դուր չէր գալիս , իսկ Արիւնան ուղղաչի կատաղում էր եւ հէնց որ Բուրուներն ու Աֆանասիչին միասին տեսնում էր , արիւնը երեսն էր թռչում . վազում էր Վիկտորիայի մօտ եւ ինչ որ փսփսում , երկար ու գրգռված : Վիկտորիան յօնքերը կիտում էր , զժգոհութեամբ ուսերը շարժում եւ բարձրաձայն պատասխանում .

—Թող դրանց . . . Թող . . . մենք ի՞նչ

եւ էն զլխաւոր զօրավիգն էր հայրենիքի հողին վրայ մնալը եւ ասիկայ ընելու մասամբ ալ սախուած էինք , քանի որ մենք կը գերազանցէինք մեր շուրջը գտնուող յիշեալ տարրերը եւ դեռ շփման մէջ չէր գտնուէր հայաստանցին Եւրոպայի հետ :

Տասնեւիններորդ Կարուն մէջ՝ տեղի ունեցաւ համաշխարհեան «գոռնացեք»-ը , ու թուրքը իր փաթաթ զլուխը խոնարհեցնելու ստիպուեցաւ Եւրոպացիներու առջեւ , որով օր քան զօր մենք աւելի ծանօթանալու հարկին մէջ գտնուեցանք , շնորհիւ մեր վաճառականական յատկութիւններուն եւ այլ գերազանցող ընդունակութիւններուն , մօտաւոր Եւրոպայի հետ :

Նոյն Կարուն մէջ մեր տուած ամբարներու , փաշաներու եւ այլ բարձրաստիճան դիւանագետներու , անդին Ռուսիոյ յուրիւրած հսկայ պատերազմիկներու , քաղաքագետներու եւ այլ զինուորական ռազմիրաններու շնորհիւ Եւրոպան դիտեց հայութեան մէջ այն սուղ «ազամանդը» , աւաղցեխերու մէջ , եւ ճանչցաւ պատմական Հայաստանը : Դեռ վերջերս էր որ ականաւոր Եւրոպացի մը յայտարարեց որ Հայաստանը Ասիոյ Զուրիցերիան է , Աստուք եւ նման ընդհարումներ դոյզն ազգեցութիւն մը ունեցան հայութեան զգացումին վրայ , իր ապատագրութեան դիմելու համար :

Եւրոպական անդառնալի մըրըցակցութեան եւ տակաւ զօրացումին առջեւ . ընկճվելով թուրքը ինչպէս եւ զախքերու յաւելման հետ եկամտից նուազումէն մատնուեցաւ անտանելի կացութեան մը , որով ստիպուեցաւ թափել իր թոյնը մեր վրայ հարկերու եւ այլ ճնշման տակ սեղմելու եւ դա-

իրաւունք ունենք . . .

Մի անգամ ես Վիկտորիա Պավլովնային տեսայ աւազանի վերելի ճեմելիքում Աֆանասիչի հետ խիստ եւ պաղ խօսակցութեան մէջ էր . նա իր հպատակին յանդիմանող թագուհու կերպարանք էր ընդունել . իսկ Աֆանասիչը դրան ծեծված շան , Ու իմ մօտեցած միջոցին լսվում էին հետեւեալ խօսքերը .

—Դուք նրան ճէնիան էլ ցոյց տըւիք . . . իսկ Աֆանասիչը աղիողորմ ձայնով պատասխանում էր .

—Աստուած ազատէ տիրուհի . վախնալով աւելորդ լինելուց , ես ճամբաս փոխեցի :

Վիկտորիան ինձ տեսաւ , բայց ձայն չը տուց : Պարզ էր որ իրօք ես յարմար ժամանակին չէի հանդիպել , ի միջի այլոց Վիկտորիան վերջին օրերում տարօրինակ էր , մի տեսակ ինքն իր մէջ խորատուղված : Ինչ որ կեղծիք էր երեւում նրանում , յայտաւոր խէթ , անմաքուր էր . ծիծաղը հնչում էր հրահրված , չոր կիրք . շրթունքները չոր եւ ջերմտ էին :

տարկելու Հայաստանը, ազատութեան կրկնող փորձանք մը ըլլալու էր, անդգոյ ճէ կրնար մնալ...

Մեծ մարդասպանի պաշտօնական հայալնջման գծովային արհաւիրքներու զգալի օրերէն ի վեր կիսամեծ հայութեան տարագիր բեկորներս մեր գաղթարշաւին մէջ հազիւ թէ աչքերնիս բացած օտար աստիքերու ներքեւ...

Ճուղները՝ տառապանքի երկրէն՝ հայութեան սրտաձիգ հարգատները և անձնուրացները, վաղանցիկ ասպնջականութեան մը գիրկը ընկած՝ իրենց տարաբազմ սիրելիներուն պարենի հոգովը տողորուն չեն զլացած փութալու հայրենիքի փրկութեան ամենակարեւոր գործիքին համար հաւաքուած գումարին խառնելու և իրենց փոքրիկ բաժինը:

Այսպէս չէր քանի մը տարի առաջ. հիմայ ժամանակները փոխուած են, յեղափոխական գործը հակառակ անցեալ տարուան ձախող մէկ փորձութեանը, այս տարի աւելի զարգացած և զօրեղ հոսանք մը առած է շնորհիւ մեր առաջադիւորներուն որոնք այլևս տասնեակներով չեն հաշուուիր այլ գիւղերով ու քաղաքներով, ներշնչելով ընդհանուր հաւատք և սրտապնդում:

Այսպէս չէր և դեռ մէկ երկու տարիներ առաջ, Լիմերիկայի յեղափոխական օժանդակութիւնը, հակառակ տասնըհինգ տարիներէ ի վեր գտնուող այս կամ այն կուսակցութեանց, որոնք ինչպէս կերելին տակաւ տուժելու և ըսպառելու վրայ են, շնորհիւ անշուշտ այն տհաս և անհամապատասխան եղանակին որ կը շարունակուի գեռ գէպի յեղափոխական Գործը:

«Շարժում»-ի տէր և խմբագիր պր. Վարդան ոչ կաշառուած և ոչ ալ կարելի՛ իր կուռ և անկողմնակալ բնաւորութեամբ, Հ. Յ. Դաշնակցութեան իր տասներորդ տարիներու շրջանին մէջ միշտ նոյն համակրանքին արժանի իր ընկերներու կողմէ մասնաւորապէս և առ հասարակ ժողովրդէն ընդհանրապէս, իր ձեռն հասութեամբը շատ պատեհ կը գտնէ իր նկատողութիւնները կարելիօրէն պահանջկոտ ձեւեր մը մէջ խտացնելու յեղափոխութեան այս կամ այն գործին շուրջը և բացարձակ կող կը ընէ իր ընկերներուն պատրաստելու համար անոնց մտքերը յաջորդ ընդհանուր Պատգ. ժողովին: Եւ աս է Դաշնակցութեան հակառակողներուն մատի փաթիթոցը այսօր, Դաշնակցութեան դէմ յարձակելու համար: Չէ որ Հ. Յեղ. Դաշնակցութիւնը սկզբունքով

հետեւող մըն է օրուան պահանջներուն, ինչպէս եւ րոպական եւ այլ կառավարութիւնները, մինչեւ իսկ Չինացին այլ բացառութիւն թուրքը և ուրիշ:

Այս կարգի երեւակայական աւելբներով չէ կարելի դոյզն իսկ սասանեցնել ազատարար Նաւ Ըր որուն զեկր կը կազմեն՝ Սրբոստներ, Բարկէններ, Պետոններ, Սերոսներ, Լեւոններ, Հրայրներ Վահաններ և կենդանի Անդրաշիրներ:

Չէ՛ մի՛ հարմարձակիք, ձեր կայինեան եղջերունիքով մօտենալ՝ ազոտուելու մեծ ճամբանս նիւ Եօրք

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Ֆիլիպպէ, 6 ապրիլ

Քաղաքիս մէջ մեծ այժմէութիւն կը գտնէ այս միջոցիս Պատուելի Ետրտմեան իր մէկ քանի քարոզներով, մանաւանդ «բարոյասիրաց» անուն ընկերութիւնովը որուն ծնունդ տալ կը բողոքայ: Պատուելին լաւ կը պատրաստէ իր քարոզները և թէպէտ ձէճիզեան մը չէ, սակայն Ֆիլիպպէի սակաւաթիւ հայ բողոքականաց աւօգտակար պիտի կրնայ ըլլալ, եթէ շարունակէ այսպէս կրօնական նիւթերու ընդլայնումին մէջէն հոգեբանական տեսութիւններ գուրս քաշել՝ Ետրտմեանի վերջին քարոզը գիտական տեսութեան մը նիւթ կըրնար ըլլալ, եթէ «անձնօթ առտուածը» «կուռքերը» «Պողոս առաքեալը» և «Արիստոքոսը» գուրս ձգուէր, յայտնամ անոր կարելի էր սպայէս անուն տալ «տղոց և չափահասներու հոգեկան վիճակը» կամ թէ «յոթի գաստիւբակութեան արդիւնքները»:

Առջի բերան գծուար կուգայ քարոզն իր բնարանին կապել, բայց պէտք է գիտնալ թէ Պատուելի Ետրտմեան անոնցմէ է որոնք ոգևոլ և իմաստով իրարու ներհակ կարծիքով բաներն իրարու մէջ անցնելու կամ

իրարու հետ համաձայնեցնելու գաղտնիքը դտած են: Մեր աչքերուն զարնոյ զխաւոր երեւոյթը պատուելիին զիւրազգածութիւնը կամ գիւրարորոքք վիճակն է, կազգուի իր խօսքերէն և ահա յանկարծ կը գտայ, կը գոչէ, կը փրփրի, կարծես կը պայքարի անձնօթ ոգիներու հետ:

Քաղով «մարդասիրաց» ընկերութեան, մեր յամին համեմատ անոր անդամոց մէջ կրօնչի և գաւանդութեան խորի գնել չուզեր, բայց ուխտ կը պահանջուի գործոն անգամներէն, որոնք 12 տարեկանէն վեր ըլլալու են: Չենք հասկնար թէ 12 տարեկան տղոց ուխտին ի՞նչու զիմու կըլլուի, Ընկերութիւնը պիտի ունենայ նշան մը և գոյներ, բնկերութեան նշանն է արեւ մը և կշիտ մը, զոր ընկերութեան ամեն անդամ օտարութեամ պիտի ըլլայ իր հագուստին վրայ երեւնալիք մէկ կողմը կըրել: Ընկերութիւնն պիտի ունենայ եօթը գոյնով եօթը խումբեր, որք են Կրական, Ժուժկայաց, Սզգասիրաց, Որբախնամ, Առաքինասիրաց, Երջիչ և Մարմնամարզական խումբ:

Իւրաքանչիւր խումբ իր գոյնին համապատասխանող ժապաւէն մը պիտի ունենայ հագուստին վրայ, այնպէս որ հեռուէն զիտողը տեսնայ թէ այդ անձը ընկերութեան ո՞ր խումբին կը պատկանի:

Պատուելին բարի գաղափարները կը գնահատենք և թէպէտ սրտանց յաջողութիւն կը մաղթենք իր օրարեսիրաց՝ ընկերութեան և անոր կարգ մը գունագեղ խումբերուն, սակայն պարտք կը համարենք յիշեցնել թէ հինը կեցած ատեն յոր մը ձեռնարկելը քիչ անպատեհութիւն չէ եթէ Պատուելի Ետրտմեան հայ բողոքական հասարակութեան գործելու ըզմանքին կամ ազգին օգտակար ըլլալու փափաքին գոհացում տալու համար «բարոյասիրաց» ընկերութեան մը հիմերը կը զնէ. մենք իրենց ցոյց կուտանք Գրասիրացը, երգեցիկ եւ թատերական երկսեռ խումբը, Աղքատախնամը, Կարմիր Ուաչը, Որբախնամը որոց անդամակցողներուն բնաւ չի հարցուիր այդքն թէ ի՞նչ հաւատքի կամ ի՞նչ դաւանանքի կը պատկանին, և այս ընարութեանց գործակցելով, մեր հայ բողոքականք մէկ կողմէն նոր ոգեւորութիւն պիտի

Աչքերը փոսն էին ընկել և սուր ու լարված փայլ ունէին:

Այդ հանդիպումի երեկոյի միջազգայն ես եւ Բուրուներ նստած էինք լճի մօտ գտնված նստարանի վրայ: Սա իր սովորութեամբ սիրտը բանում է: Ես ըստ սովորութեան կիսատ կերպով լսում եմ, աւելի շատ հետաքրքրվում եմ անաշխին ոսկեղոցերով, որ լուսինը սփռում է ջրի երեսին: Եւ ահա իմ խեղճ Ետրտմեան յանկարծ ընդհատեց իր ողբալի գանգատները, ոտքի կանգնեց և աչքերը լարեց:

— Ի՞նչ պատահեց հարցնում եմ ես:

— Այնտեղ, լճակի ետեւում մէկը քայլում է... զայժմայժմ նա կցկուտը խօսքեր նետեց ինձ աչքերը միւսով միջազգայն խաւարի մէջ:

Ես էլ այն կողմը նայեցի. իրօք թիքիքի ետեւում թեթեւ արագութեամբ սահում էր մի սպիտակ կէտ:

— Իրկտորիա Պավլովնան է սասցի ես:

— Վրկտորիա Պավլովնան, փնթփնթաց Բուրուներ՝ փոխված ձայնով:

Անկարելի է. մի քիչ առաջ, թէից յետոյ նա հեռացաւ իր սենեակը յայտարարելով որ էլ դուրս չը պէտք է գայ... նա հաւանական է որ վաղուց արդէն անկողնում է... ինչ գործ ունի պարտեզում. գլուխն էլ ցաւում էր:

— Ձայն տանք, Վրկտորիա Պավլովնա:

Շարժվող կէտը կանգնելու պէս եղաւ, բայց յետոյ աւելի արագութեամբ քայլեց, լճակի ափով պարտեզի խորքը մտաւ, այնտեղ ուր հին փայտէ շրջապատով բաժանվում էր պուրակից: Բուրուներ չը դիմացաւ եւ բարձր ուժով սկսեց վազել շարժվող կէտի ետեւից գոռալով, Վրկտորիա Պավլովնա՛, Վրկտորիա Պավլովնա՛:

— Ի՞նչ կայ, հեռուից լսեցի դժգոհ ձայն:

— Այդ դո՞ւք էք:

— Ոչ, ուրե՛սկան:

— Դուք անտառ է՞ք գնում, այսպէս ուշ ժամանակ:

— Ես ոտաբորիկ եմ, լսվեց կարծ-

լակոնական պատասխանը, շատ տըհաճ եղանակով:

— Բայց ի՞նչպէս, ուր այդպէս մինակ:

— Էհ, ի՞նչ կարող է պատահել. գայլերը կուտեն ինձ, ի՞նչ է: Այժմ ամառ է. նրանք կուշա են:

— Էհ, ես էլ կարող եմ ձեզ հետ գալ:

Վրկտորիա Պավլովնան ոչ իսկոյն պատասխանեց.

— Էհ, եկէք, կարելի է:

Նրա ձայնում լսվում էր դժգոհութիւնը այն մարդի, որին խանգարել են հէնց այն րոպէին, որ նա երբէք չէր սպասում, Բուրուներ վազեց նրա մօտ:

— Բայց ոչ, դուք իրաւունք ունէք. հիմա խոնաւ է, իրօք շարժէ պուրակ երթալ. կարելի է օձի հանդիպել. կամ թէ աչքը հանել: Մի վազեցէք Բուրուներ, աւելի լաւ է ես ձեր մօտ կը գամ. սպասեցէք:

Նա իրօք ոտաբորիկ էր. ինչ որ մի բան վրան ձգած, ու փաթաթված մետաքսէ սպիտակ գլխի ծածկոցում:

— Մի պայմանով, Բուրուներ, ձեռքերս չը պէտք է համրուէք, սասց նա. մեր մէջ սեղը նստելով, որովհետեւ ծածկոցիս տակից հանել չեմ կարող: Ես առանց բաճկոնի եմ. այսօր սարսափելի տաք է:

Իրօք որ Վրկտորիայից արտաշնչվում էր երիտասարդ մարմնի բոցավառ շունչ: Աչքերը խաւարի միջից փայլում էին մի տեսակ տալօրինակ, ճնշող փայլով. ինչ որ սուր եւ վայրենի բան կար ժպիտի մէջ, որով նա զիտում էր արագութեամբ խաւարող գիշերը:

— Այսօր մի տեսակ էք դուք, սասցի ես:

— Ի՞նչ, հարցրեց նա կուսկածոտ եւ խիստ կերպով:

— Վակիտակայի էք նմանում. ես ձեզ այդպէս երբէք չեմ տեսել:

— Սիրահարված եմ, կատայեց նա, դողալով և կեղծ ծիծաղով:


Շարունակելի

մտցնեն անոնց մէջ, և միւս կողմէն ազգին օգտակար ըլլալու իրենց փափաքին գոհացում տուած պիտի ըլլան: Եւ արդէն ազգին այդ երկու հատուածները, զորս պատմական դարձած անչըջանկատու թիւեր բաժնուած է, կրնան իրարու միանալ այժմ, յանուն տառապեալ հայրենիքին ու նախատակ ազգին որ մեր և իրենցն է հաւասարապէս և յանուն ճակատագրական չարչարանքներուն ազգի մը որուն իրենք ալ մաս կը կազմեն: Հետեւեալ արդէն ալ հարկ չկայ նոր կազմակերպութեանց, Բայց եթէ Պատ. Եւրոպեան անպատճառ առանձին գործել կուզէ, այդ իր գիտնալիք բանն է, այն ատեն զարմեալ յաջողութիւն:

Հիմա դառնանք մեր թաղականներուն. մենք լաւ տարրերով (!) օժտուած այդ մարմինն ինչեր կսպասէինք. և կը տեսնենք որ ինչքան յուսախար թողուցին դիմզայդ ինքնակոչ թաղական էֆէնտիները: Միտք բնաւ չըրին լեզուն բերնին մէջ դարձող պաշտօնեայ մը գտնել եկեղեցւոյ համար, զէթ այս սօնական օրերուն մէջ ժողովուրդը հոգեպէս միթարելու: Եւ կը զարուարենք մտածելով թէ մեր ժողովուրդէն շատեր պիտի հրապուրուին Պատուելիին «Ձատիկի» քարոզչին կամ անոր հաղորդութեան խորհուրդէն ճաշակելու: մինչ իրենք ազգին սրտերին հանդարտ եկեղեցիին հասոյթովը՝ հոշակաւոր Առաւփախաւ խաչագոյ անկարեայ տնօրէնի մը գրպանները կը պարարտացնեն:

ԱՒՕ

ՀԱՅ ԱՇՈՒՂԸ



Նա մի երիտասարդ՝ տակաւին շատ երիտասարդ, հազիւ 25 տարեկան աշուղ է. երկու աչքերով էլ կոյր երիտասարդ ծիւ հասակով կոյր...:

Նա աչքով կոյր է, բայց հոգով ոչ. ապացոյց սրան—նա կարողացել է այնպէս զգալ և ներշնչել մի ուրտրա յեղափոխական ոգիով, ինչ որ մենք զեռ եւս ունենք շատ հայ անհատներ, որոնք թէպէտ ֆիզիոլոգիական հանգամանքով ամբողջ, բայց էլի հոգով կոյր են և որոնք թէ գիտակցութիւնով և թէ ինտսինքստով պիտի կարողանային զգալ ու ներշնչել: Բայց ինչպէ՞ս գաղափարեց նա, ինչպէս դիմուանց, ով մտցուց նրա մէջ այդ վեհ գաղափարը, բնազդը. նա աստանդական ցուպը, իր ընկերակիցս սպը ձեռքին առած հեռաւոր կովկասից լեռներ ու սարեր ճեղքած եկել ինկել է Բուլղարիա, ուր նա քաղաքից քաղաք պտոյտ է գալիս ու երգում կարեւոր Հայրենիքի ցաւերը:

Նրա երգերը ժողովրդական են բայց ոչ սովորական, այլ ամենարեւելական, գոռ փոթորիկոտ անցքերի նկարագրութիւններ, ծով ցաւերով լի յեղափոխական ոգիով հիւսած երգեր:

Նրան վիճակել է կոյր լինել,

բայց նա հեղեմով է իր ճակատագիրը ապրվելու անկարող՝ ձրգտուած ծառայել հայրենիքին իր կեանքը մաշեցնելով պրոպագանդ վարել: Նա անզուգական է՝ իր տեսակին մէջ հոգեբանօրէն վեր առած նա մեծ դեր է խաղում մեր այժմու կեանքում:

Սիրակ Արամեան

3 ապրիլ 905
Թուսնուք

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Խորին շնորհակալութիւն կը յայտնենք Վաւուայի հայ հասարակութեան որ իր նուէրներով չի վաքաւ օգնել թէ Ստանոյ գժբազդ կարօտեալներուն և թէ Ազգ վարժարանի ազգատիկ սաներուն: Նոյնպէս Պ. Պ. Պապեանի եւ Երամեանի որոնք ներկայացման ժամանակ գերակատարներուն օգնեցին թէ հագուելու և թէ գէմք շինելու:

Ներհակալութիւն նաեւ Պատ. Յանձնախումբերուն՝ որոնք ամենայն հողածութեամբ իրենց պարտականութիւնները կատարեցին:

Նոյնպէս և թատրոնատէրերուն որոնք իրենց սրահները մեր արժամադրութեան տակ դրին առանց վարձի:

Վարչութիւն Գողթանի (ԳՆԻՔ)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԻՒԱ

Անգլիան կը մերժէ բանակցել Մակեդոնական ելեւմտից քօնթրօլի մասին և կը պնդէ որ Մակեդոնիոյ ինքնավարութիւն տըրուի:

Պուլկար գործակալը նաչովիչ և մեծ պետութեանց դեսպանները բողոքեր են յոյն հրօսախմբիտն կատարած գաղանութիւններուն համար:

Անգլիայի նախաձեռնութեամբ պետութիւնները ի թիւս որոց և Աւստրիան ու Թուրքիան ընդունած են միջազգային քօնթրօլը Մակեդոնիոյ ելեւմտից վերաբերմամբ:

Քօսովայի վալիւն և զինուորական հրամանատար Շաքիր փաշան պետ նշանակուած է յանձնախմբի մը որուն նպատակն է խաղաղեցնել ապստամբ Արաբիան:

Ապրիլ 26ին Պուլէն կը հաղորդեն որ Քօչան գիւղացի պուլկար Իվանչօ Դոթէվ որ պուլկար հրոսախուժը Տը մատնած էր նոյն հրոսախմբի կողմէն ձերբակալուեր և հրացանի բռնուեր է: Այդ գէպքի առթիւ թուրք իշխանութիւնները ձերբակալեր են

14 Քօչան գիւղացի պուլկարներ չը նայելով որ բացայայտ են թէ այդ գիւղացիները անձեղ են:

ՌՈՒՍԻԱ

Անդրկովկասեան երկաթուղիներու բոլոր գործաւորները գործադուլ ըրեր են. հաղորդակցութիւնը բոլորովին խզուած է:

Մեծ իշխան Սէրկին սպաննողը կալայէվ մահուան դատապարտուած է. ան դատաւորներուն յայտարարէ որ ինք կառավարութեան թշնամի կուսակցութեան մը պատկանելով գերի ինկած է դատաւորներուն ձեռքը: Պահանջեր է նաեւ որ պիտքը հրապարակու կախեն, ինչպէս ինքը հրապարակու սպաննած է մեծ գուքը:

Ռ. ի թէ նախարարական խորհրդի նախագահութեան հրաժարած է:

Պալթիկեան նաւահանգիստներու գործաւորները գործադուլ ըրած են և վարձպէի յատելում կը պահանջեն:

Բեթերսպուրկի եւ Բիէվի մէջ րապմաթիւ գաղտնի տպարաններ բռնուած են ինչպէս եւ յեղափոխական գրուածքներ:

Գիտութեան ճեմարանի խորհուրդը որոշած է բոլոր արգիլեալ գրքերը, մանաւանդ արտասահման հրատարակուածները ունենալ:

Նշանաւոր պաշտօնեայ մը մօտ երեք հարիւր հազար Ֆրանք գողնալով փախեր է. կառավարութիւնը այդ գող պաշտօնեայի խնդիրը հրապարակու պիտի քննէ:

Պնօստի թերթը կը յայտարարէ որ ուսուցիչը աշխարհիս ամենամեղաւոր ժողովուրդն են, որովհետեւ կէս տարիէ ի վեր կը բռնուին իրենց մեծ մարդիկը շնջելով: Ընկրթութեան կորուսուածներու անունները, Պուլկին Չերնիշէվսկի, Դոստօէվսկի, Գերցէն և ուրիշ շատեր, որոնք հողածուեր են կառավարութեան:

ՌՈՒՍԱՆԻԱ

Ընդունական կարծեցեալ իշխան Գիկա, յայտարարած է որ Պուլկէշի մէջ Ալպանական զօնկրէ պիտի հրաւիրէ, որտեղ քրննութեան պիտի ենթարկուի Ալպանիոյ լընդհանուր ապստամբութեան և անկախ հրատարակելու խնդիրը: Կը կարծուի որ Ռուսէն կառավարութիւնը այդ զօնկրէն պիտի արգիլէ, որը թէ վտանգաւոր և թէ քաղաքական արկածախնդրի մը գործ կը համարէ:

Մայրագոյն արեւելքէն եկած լուրերը կը հաղորդեն որ ճարտագիտները արդէն իրենց յարձակողական պատրաստութիւնները տեսած են և մօտ օրերս Օլամայի կողմէն յարձակում կըսպասուի:

Եւրոպական պատերազմական քննադատ մը կը կարծէ որ ամբարլ Թօկօ գժուար թէ մեծ ծովու մէջ աակատամարտի բռնուի ուս նաւատորմի ին հետ, ընդհակառակը ան թոյլ պիտի տայ որ ուս նաւատորմի զը մօտենայ Վլաաիվօսթօքի, ուր իրենք ամեն յարմարութիւններ պիտի ունեննեն իսկ ուսները ոչ: Թօկօ ինք շատ լաւ կը հետեւի ուսնաւատորմի ընթացքին, բայց իր ուր ըլլալը չեն գիտեր:

Տէյլ Մէյլ թերթը կը հաղորդէ որ ուս գործակալները, հաւանականօրէն Թրանսպիներ, կտրած են ընդձուխայ հեռագրական թերթը որ Թօրմալա կղզին կը կապէ ճարտնական նաւատորմի ին հետ:

ՓՈՒՐԱՆԵՐ ՕԳՏՈՒԻԼ ՌԻՕԳՆԵԼ

Համալսարան գիտական ու գրական հանդէսի երկու հատորները (որոնցմէ միայն 50 օրինակներ մնացած են), փոխանակ իրենց սրբական արժէքովը 22 ֆրանքի ծախուելու, «Կը ծախուին 15 ֆրանքի» միայն: Աւելորդ է խօսիլ անոր բովանդակութեան շահեկանութեան մասին, որուն վրայ արդէն հայ մամուլի լաւագոյն ներկայացուցիչները ժամանակին շատ լաւ են գնահատանքի արժանէն փայտախիչները:

Բացի այն որ Համալսարանի երկու կտորները իրենց անթաւամ ու հրահանգիչ պարունակութեամբ պիտի ըլլան միշտ ինքնազարգացումով զբաղողներու համայնագիտարանը, այլ լաւագոյն անկիւնը պիտի դրանեն միշտ փնտռուած և հետաքրքիր գիրքերու մէջ, որոնք պիտի զարգարեն անհատական թէ հասարակական գրադարանները, մնալով ցարդ ամենէն փայլուն նմուշը «Հայ լրագրութեան»:

Համալսարանի գինը սկարագնելով մեր նպատակն է առաջին շուտով տարածել անոր մնացած հատորները հայ ժողովրդին մէջ, որպէս զի իրենց հրահանգիչ նպատակին ծառայեն, երկրորդ գեղեցիկ առիթ մը ընծայել, զայն գնել փութացող ուսումնասիրներուն առանց ու է գոհողութեան, կարենալ օգնելու Մուշի կարօտեալներուն, որովհետեւ զուտ հասոյթին մէջ երրորդ մասը պիտի յատկացուի այդ վերջիններուն: Գնողներու անունները կամ ծածկանունները, ինչպէս որ իրենք փախաքին, հրատարակուելու են շալարենիքի նոյն նըպատակով բացած հանգանակութեան ցանկին մէջ:

Սմեն տեղի համար երկու հատորները թղթակագժ 15 ֆրանք կարելի է դիմել Շարժումի խմբագրութեան կամ ուղղակի՝ Պալսաուրեան 19 րիւ Վօֆիլին Բարիլ:

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Печатница «Взаимность» Варна